**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար 12 000 ազգաբնակչություն սպասարկող ոստիկանության նոր ստորաբաժանման տիպային (բազմակի կիրառման օրինակելի) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և Մեղրի համայնքում դրանց տեղակայման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 08.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագրում 31.05.2023թ. կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի N 494-Ն որոշում |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.15 կետեր |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**08.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 գնման պայմանագրի**

ք. Երևան 31. 05. 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի N 494-Ն որոշումը և 12 000 ազգաբնակչություն սպասարկող ոստիկանության նոր ստորաբաժանման տիպարային (բազմակի կիրառման օրինակելի) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և Մեղրի համայնքում դրանց տեղակայման խորհրդատվական ծառայությունների կատարման համար Կողմերի միջև 08.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Պայմանագրի 7.15 կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.16 կետ.

«7.16. Պայմանագրով նախատեսված՝ պայմանագրի արդյունքի, պայմանագրի չկատարման կամ տեխնիկական բնութագրից շեղումներով կատարման կամ ուշացումների համար հաշվարկվող տույժերի և տուգանքների դիմաց վճարումների հետ կապված իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի անունից իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են 1 (մեկական) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011037000<br>ՀՎՀՀ 01533334 | <<ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ<br>ք. Երևան, Աբովյան 29շ., 15բն.<br><<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 16600057361700<br>ՀՎՀՀ 01553657 |
| Գլխավոր քարտուղար՝<br>_____________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>_____________ Վ. Սարգսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
08.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 գնման պայմանագրի
31.05.2023թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
08.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200-562 | 12 000 ազգաբնակչություն սպասարկող ոստիկանության նոր ստորաբաժանման տիպարային (բազմակի կիրառման օրինակելի) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և Մեղրի համայնքում դրանց տեղակայման խորհրդատվական ծառայություններ | - | - | - | - | - | - | 23 000 000 | 23 000 000 | 23 000 000 | 46 000 000 | 46 000 000 | 46 000 000 | 46 000 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037000
ՀՎՀՀ 01533334

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 29շ., 15րն.
<<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16600057361700
ՀՎՀՀ 01553657

Տնօրեն՝

(ստորագրություն) Վ. Սարգսյան

Կ.Տ.

Հավելված 5
ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N 3357/07**

(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ** միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Էվոկաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **4 640 000 /չորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան **31.05.2024թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evoca.am
www.evoca.am

№ 3357 07 1660199855

Date 17 / 05 2023

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո։

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին։

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները։

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

**Վարչության նախագահի տեղակալ** ________________ **Հ. Պետրոսյան**

**Գլխավոր հաշվապահ** ________________ **Է. Ջանինյան**

EVOCABANK
00001182

evocaBANK

Հավելված 4
ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N 3356/07**

(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ** (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ)։

2. Երաշխիքով «Էվոկաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **6 960 000 / վեց միլիոն ինը հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում։ Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով։

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է։

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում։

5 . Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան **31.05.2024թ.**։ Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին։

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով։

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը։

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար։

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evoca.am
www.evoca.am

№ 3356/07 1660199854

Date 17/05 2023

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե`

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Վարչության նախագահի տեղակալ** ______________ **Հ. Պետրոսյան**

**Գլխավոր հաշվապահ** ______________ **Է. Ջանինյան**

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ARMENIA, "EVOCABANK" CJSC
АРМЕНИЯ, «ЭВОКАБАНК» ЗАО
evocaBANK
0000182

evocaBANK

Հավելված 5.2
ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N 3358/07**
**(կանխավճարի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ՆՈՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝պրինցիպալ) միջև կնքվելիք կամ կնքված N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագրով նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում։

2. Երաշխիքով «Էվոկաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև **6 900 000 (վեց միլիոն ինը հարյուր հազար ) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում։ Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցելու միջոցով։

3. Երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տվող անձի կողմից։

4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում։

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև **31.05.2024թ.-ը** ներառյալ։

6. Կանխավճարը փոխանցվում է պրինցիպալի «Էվոկաբանկ» ՓԲԸ բանկում սպասարկվող թիվ 16600057361700 հաշվարկային հաշվին։

7. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տված անձին գրավոր ձևով։ Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը։

Կանխավճարի շրջանակներում պրինցիպալի կողմից կատարվելիք աշխատանքների ժամկետների խախտման դեպքում բենեֆիցիարն իրավունք ունի հետ գանձել տրամադրված կանխավճարի չմարված մասը։

8. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար։

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evoca.am
www.evoca.am

№ 3358/ 07 1660199856

Date 17 / 05 2023

9. Երաշխիք տվող անձի կողմից բենեֆիցիարի պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում երաշխիքային գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:

10. Երաշխիքի գումարը նվազեցվում է բենեֆիցիարի կողմից այդ մասին երաշխիք տվող անձին գրավոր դիմում տալու միջոցով:

11. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա երաշխիք տվող անձը երաշխիքով բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով երաշխիքի իր օրինակը:

12. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում երբ բենեֆիցիարի կողմից երաշխիքի 11-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

13. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

14. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է բենեֆիցիարին:

15. Սույնով բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից երաշխիքի բնօրինակը երաշխիք տված անձին վերադարձվելու դեպքում դադարում են երաշխիքից բխող երաշխիք տվող անձի հանդեպ բենեֆիցիարի իրավունքները:

16. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

17. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքի տրամադրման օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում նշված՝ քարտուղարի (գնումները համակարգողի) էլեկտրոնային փոստի հասցեին:

**Վարչության նախագահի տեղակալ** ________________ **Հ. Պետրոսյան**

**Գլխավոր հաշվապահ** ________________ **Է. Ջանինյան**

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
АРМЕНИЯ, «ЭВОКАБАНК» ЗАО
ARMENIA, "EVOCABANK" CJSC
evocaBANK
00001182